



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Շաբաթ, 5 Օգոստոս.– Սրբոց՝ Որդւոց եւ Թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան։

Կիրակի, 6 Օգոստոս.– Գ. Կիրակի զկնի Վարդավառի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Պատարագեց Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան։

Շաբաթ, 12 Օգոստոս.– Սրբոյն՝ Գրիգորի Աստուածաբանին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Ժամարարն էր Տ. Խաղ Ծ. Վրդ. Ճոնտուրեան։

Կիրակի, 13 Օգոստոս.– Դ. Կիրակի զկնի Վարդավառի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան։

Յետ Ս. Պատարագի ձեռամբ Լուսարարապետ Սրբազան Հօր կատարուեցաւ «Խաղողօրհնէք»-ի արարողութիւն, ապա օրհնուած խաղողը բաժնուեցաւ հաւատացեալներուն։

Երկուշաբթի, 14 Օգոստոս.– Սկիզբ Աստուածամօր Վերափոխման տօնը կանխող 14-օրեայ Ս. Պատարագներուն։

Կիրակի, 20 Օգոստոս.– Ե. Կիրակի զկնի Վարդավառի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան։ Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան։

Ուրբաթ, 25 Օգոստոս.– Նախատօնակին Ս. Յակոբեանց Մայր տաճարի՝ Ս. Էջմիածին եկեղեցւոյ մէջ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

Շաբաթ, 26 Օգոստոս.– Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր տաճարի ձախակողմը գտնուող Ս.

Էջմիածին եկեղեցւոյ մէջ։ Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան։

Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման նախատօնակը։

Գիշերասկզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեցէ»-ի եւ Հսկման ժամերգութիւնները։ Հանդիսապետն էր Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան։

Կիրակի, 27 Օգոստոս.– Վերափոխումն Ս. Աստուածածնի։ Առաւօտուն Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատուցուեց եւ քարոզեց, ապա «Անդաստան»-ի արարողութեան նախագահեց Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան։

Երկուշաբթի, 28 Օգոստոս.– Բ. օր Վերափոխման։ Յիշատակ Մեռելոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան։ Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ։ Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

Շաբաթ, 2 Սեպտեմբեր.– Է. օր Վերափոխման։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց։ Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան։

Կիրակի, 3 Սեպտեմբեր.– Ը. օր Վերափոխման։ Ըստ սովորութեան, Տեսչական Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի վերնատան երաշխաւոր Ս. Աստուածածնի մատրան մէջ։ Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան։ Ս. Պատարագը մատուցուեց Ս. Յարութեան տա-

ճարի տեսուչ՝ Տ. Սամուել Մ. Վրդ. Աղոյեան:

Երկուշաբթի, 4 Սեպտեմբեր. Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղատարական:

Երեքշաբթի, 5 Սեպտեմբեր. Սրբոցն Յովակիմայ եւ Աննայի, ծնողաց Ս. Աստուածածնի եւ կանանցն իւղաբերից: Հստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ՝ Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Դեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան: Պատարագեց տաճարի տեսուչ՝ Տ. Արտակ Արդ. Տիւնէնեան:

Շաբաթ, 9 Սեպտեմբեր. Սրբոց Առաքելոցն՝ Թովմայի, Յակոբայ եւ Շմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Դեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատեսակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 10 Սեպտեմբեր. Գիւտ Գօտույ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Յաւարտ Ս. Պատարագի հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր՝ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն նախորդ օրը տաճարի մաքրութեան մասնակցող բարեպաշտ տիկիներու եւ օրիորդներու հանգուցեալ պարագայից հոգիներուն համար: Արարողութեան աւարտին հոգեսուրճ տրուեցաւ տեսչարանին մէջ:

Շաբաթ, 16 Սեպտեմբեր. Նիկիոյ Ս. Ժողովոյն երեք հայրիւր ութ եւ տասն հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորիւն Մ. Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 17 Սեպտեմբեր. Դ. Կիրակի զկնի Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատարն մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Արդ. Հայրապետեան:

Չորեքշաբթի, 20 Սեպտեմբեր. Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Հինգշաբթի, 21 Սեպտեմբեր. Ծնունդ Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ

«Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Տ. Խադ Մ. Վրդ. Ճոնտուրեան:

Յաւարտ Ս. Պատարագի, կատարուեցաւ «Հանրապետական մաղթանք» Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 32-ամեակին առիթով:

Շաբաթ, 23 Սեպտեմբեր. Տօն եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Խադ Մ. Վրդ. Ճոնտուրեան:

Յաւարտ Ս. Պատարագի, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ Մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն Սեպտեմբեր 19-20 Ատրպէյճանական յարձակումներու հետեւանքով զոհուած մեր քաջարի զինուորներու եւ խաղաղ բնակիչներու հոգիներու հանգստութեան համար:

Խաչվերացի մեծահանդէս նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որ ապա Խաշափայտի Ս. Մասունքը թափօրով Ս. Գլխադիրէն փոխադրեց Աւագ խորան:

Դիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցէի» եւ «Հսկման» արարողութեանց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 24 Սեպտեմբեր. Տօն Վերացման Սրբոյ Խաչին: Առաւօտեան Մայր տաճարին մէջ պաշտուեցան Դիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր տաճարի Աւագ խորանին վրայ մատուց եւ քարոզեց Տ. Սամուել Մ. Վրդ. Աղոյեան:

Կէսօրէ ետք, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, Մայր տաճարին մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»:

Երկուշաբթի, 25 Սեպտեմբեր. Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ներսէս Արդ. Աղոյեան:

Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ Հոգեհանգստեան Պաշտօն Մեղքոնեան ընտանիքի ննջեցեալներու հոգիներու հանգստութեան համար:

Շաբաթ, 30 Սեպտեմբեր. Տօն Խաչի: Ս. Պա-

տարազը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Դազարեան:

Կիրակի, 1 Հոկտեմբեր.- Բ. Կիրակի զկնի հաշի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 6 Հոկտեմբեր.- Ս. Գէորգայ նախատօնակը պաշտուեցաւ Դպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Շաբաթ, 7 Հոկտեմբեր.- Սրբոյն Գէորգայ Զօրավարին, Աղոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Դպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Հանդիսապետն էր Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեան: Արարողութեան աւարտին, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Դպտոց վանքի տեսչին:

Կիրակի, 8 Հոկտեմբեր.- Գ. Կիրակի զկնի հաշի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Եղիշէ Վրդ. Ուշքունեան:

Շաբաթ, 14 Հոկտեմբեր.- Սրբոց Եօթանասուն եւ Երկու Աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր տաճարի գաւիթը գտնուող՝ Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան թափօր տաճարէն ներս: Հանդիսապետն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 15 Հոկտեմբեր.- Դ. Կիրակի զկնի հաշի: Տօն Վարագայ Ս. հաշին: Առաւօտեան ժամը 6:30-ին հանդիսապետութեամբ Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեանի, միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. Գողգոթայի ուխտէն ետք Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Ապա Լուսարարապետ Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. հաղ Ծ. Վրդ. Ճոնատուրեան:

Ուրբաթ, 20 Հոկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 21 Հոկտեմբեր.- Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթովին, Դաւթի Անյաղթ Փլխոփային, Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Կիւլպէնկեան Մատենադարանի տեսուչ՝ Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Յաւարտ Ս. Պատարագի Լուսարարապետ Ս. Հայրը նախագահեց Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներու համար կատարուած Հոգեհանգստեան կարգին:

Կիրակի, 22 Հոկտեմբեր.- Ե. Կիրակի զկնի հաշի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Աղան Աբղ. Գողգեան:

Շաբաթ, 28 Հոկտեմբեր.- Ս. Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասոս եւ Յովհաննոս: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան գաւիթը գտնուող Հայոց Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան:

Կիրակի, 29 Հոկտեմբեր.- Զ. Կիրակի զկնի հաշի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Երկուշաբթի, 30 Հոկտեմբեր.- Սուրբ Յովսէփայ Աստուածահօրն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ՝ Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: Պատարագեց Տ. Տիգրան Քհնյ Ոսկանեան:

Շաբաթ, 4 Նոյեմբեր.- Ս. Երկոտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. հաղ Ծ. Վրդ. Ճոնատուրեան:

Կէսօրէ ետք, Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ապա Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան

Թափօրին հանդիսապետեց Տ. Եղիշէ Վրդ. Ուչքունեան:

Կիրակի, 5 Նոյեմբեր.– Է. Կիրակի զկնի հաշի: Գիւտ Ս. Խաչի: Առաւօտեան ժամը 5:30-ին, հանդիսապետութեամբ Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեանի միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան տաճար: Ս. Գորգոթայի ուխտէն ետք, Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Երկրորդ մուտքին հանդիսապետեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, ապա Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Յետ Սուրբ եւ Անմահ Պատարագի կատարուեցաւ մեծահանդէս Թափօր, նախ Գիւտ հաշի Այրը, ապա Ս. Գերեզմանին շուրջ եռադարձ Թափօրով եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրին հանդիսապետեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, ամպօղանի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին:

«Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Այսպէս փակելով 2023 տարւան Ս. Յարութեան Տաճարի հանդիսութեանց շրջանը:

Շաբաթ, 11 Նոյեմբեր.– Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Ալոյեան:

Կիրակի, 12 Նոյեմբեր.– Ը. Կիրակի զկնի հաշի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 17 Նոյեմբեր.– Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 18 Նոյեմբեր.– Ս. Հրեշտակապետաց Պատարագը Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց Տ. Եղիշէ Վրդ. Ուչքունեան:

Կիրակի, 19 Նոյեմբեր.– Թ. Կիրակի զկնի հաշի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Շաբաթ, 25 Նոյեմբեր.– Ս. Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Պատարագեց Տ. Աղան Աբղ. Գոգեան:

Կիրակի, 26 Նոյեմբեր.– Ժ. Կիրակի զկնի հաշի: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Պատարագեց Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Շաբաթ, 2 Դեկտեմբեր.– Ամենայն Սրբոց՝ հնոց եւ նորոց, յայտից եւ անյայտից: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան:

Կիրակի, 3 Դեկտեմբեր.– ԺԱ. Կիրակի զկնի հաշի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Երեկոյեան նախատօնակին ի Սրբ. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Երկուշաբթի, 4 Դեկտեմբեր.– Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի հանդիսապետութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուն հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի, կատարուեցաւ Հոգեհոգստեան պաշտօն վասն հոգւոցն Կիւլապի Կիւլպէնկեանի եւ համայն ննջեցեցոց Կիւլպէնկեան գերդաստանի:

Շաբաթ, 9 Դեկտեմբեր.– Ս. Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի Հայրապետին եւ Միւռոնայ Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Խաղ Ծ. Վրդ. Զոնտուրեան:

Յաւարտ Ս. Պատարագի, հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր, կատարուեցաւ Հոգեհոգստեան պաշտօն Տ. Տարօն Եպս. Զէրէճեանի հոգւոյ համար:

Կիրակի, 10 Դեկտեմբեր.– Ա. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Պատարագեց Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Ուրբաթ, 15 Դեկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 16 Դեկտեմբեր.– Սրբոց Առաքելոց

եւ առաջին Լուսաւորչացն մերոց՝ Թադէոսի եւ Բարթոլղիմէոսի: Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրլխաղիր: Ժամարարն էր Տ. Ներսէհ Աբղ. Ալոյեան:

Կիրակի, 17 Դեկտեմբեր.- Բ. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր տաճարի Աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Ղազարեան:

Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Ուրբաթ, 22 Դեկտեմբեր.- Յղութիւն Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Առաւօտուն Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան Սրբազան Հօր հանդիսապետութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար, ուր օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանի վրայ մատուցեւ քարոզեց հանդիսապետ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Շաբաթ, 23 Դեկտեմբեր.- Ս. Նիկողայոսի Սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: Վերաբերումը կատարուեցաւ գաւթին մէջ գտնուող Ս. Նի-

կողայոսի Սեղանին վրայէն:

Կիրակի, 24 Դեկտեմբեր.- Գ. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Պատարագեց Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Ուրբաթ, 29 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան Սրբազան Հայրը, որմէ յետոյ վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութեան շորս աստիճանները տուաւ օրհնութեամբ՝ Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեանի, Տ. Ներսէհ Աբղ. Ալոյեանի եւ Տ. Աղան Աբղ. Գոգչեանի, որոնք իրմէ ձեռնադրուած եւ վեղար ստացած էին 2014 թուականի Յուլիս 27-ին:

Շաբաթ, 30 Դեկտեմբեր.- Ս. Յակոբայ Մըծբընայ Հայրապետին, Մարուգէի Ճգնաւորին եւ Մեկիտոսի Եպիսկոպոսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 31 Դեկտեմբեր.- Դ. Կիրակի Յիսնակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Զախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Պատրաստեց՝ ԳՐԻԳՈՐ ՍՐԿ. ԹԱՔՈՒՇԵԱՆ

